ՄԵԼԵԱՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵՐԻՆՑ

ԱՌԵՐԵՔԵՆՈՅՑ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,
ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՒ

ԶՈՒԱՐՃԱԼԻ ԳԻՏԵԼԻՔՆՑ

ԹԻՒ 13. 15 ՄԱՐՏ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՈՒ ՀՐԻՒՐՔՆԵՆ
— 1857 —

ՀԱՆԴԷՍ ԱԽՍԱՐԱԿԱՆ

Թիւ 13. 1857 15 ՄԱՐՏ.

ՎԵՐՋԻՆ ԹՐԻՈՅ, ԾԱՆՈՒՑՎԱԾ ՆԱՄԱԿԸ ԵՒ ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

Ինչպէս որ վերջին Թրուոյն վերջին երեսին մէջ ծանուցեր էինք՝ ահա ելը հրատարակենք այն նամակը, մեր պայմանին հաւատարիմ գրանցելելով. Այս նամակին համար տպագրիչն ալ յատուկ զգուշութիւն ըրած է ուշադրութիւնը ամենակատարեալ ճշդութեամբ օրինակելու.

Յարգամէջար Բարեկամ և Տէր Մեղա Կիսանէյ
Հանդիպեսի:

Կ. Պոլիս, 25 Փեբրվար 1857

Մեր ազգայութեան ժամանակը՝ այսինքն ասկէց չորս կամ հինգ տարի առաջ ընթերցասիրութիւն անուն Պ. Զօրայեանին պատուական բանահիւսութիւնը՝ կամ լաւ

ևս է ըսել, ազգային յառաջադիմութեան խթանը կարգ դալոնելիս այն ժամանակէն իսկզբան համոզուած ենք, որ մտաւորական մշակութեանց կամ որնոյնն է ազգի մը լուսաւորութեան գլխաւոր պատճառներէն մէկն ալ լրագիրներու շատութիւնն է։ Այս համոզումը իսկոյն մեր մտացը մէջ տիրապետած է որ՝ ընդաբոյս պտղոյ մը սեպուած կը համարենք զայնս յաճախ կարդալը ամենայն բանասիրաց։ — Ուստի՝ երբ որ ազգային լրագրոյ մը խաբանումը լսենք քիչ ցաւ չենք զգար։ փոխադարձաբար, երբոր նոր լրագրոյ մը հրատարակութիւնը լսենք՝ անշուշտ իսկ և իսկ հրճուանօք և ուրախութեամբ կը լեցվինք։ իբրու թէ ազգայնոց լուսաւորութեան խաւիլը՝ վերաթռչելու սատար թև մը աւելցած համարելով։

Այս արդարև մերոյս իրաւացի համոզումը ձեր մեզուին միջոցով կրկին ոգիկրստանայ մեր սրտին մէջ, քանի որ գեղեցիկ բարոյական՝ բանասիրական դրագիտական[2] և այլն։ վէպեր անոր թևերովը հասարակութեան հաղորդվելը կը տեսնենք։ և տա աւելին ևս կակընկալենք՝ յուսալով։ . . .

Բայց այսու ակնկալութեամբ սպասելնիս որչափ արխրութեամբ և ցաւօք կը ընցուինք՝ երբոր յիշեալ քաջայարմար և բեղմնաւոր գրութիւններու հետ մէկտեղ ազգայնոց մէկ մասին՝ մանաւանդ իմաստուն մասին դատողութեանը հակառակ զուարճախօսութիւններ, այսինքն՝ օտար քաղաքներէ ազգակցացիսօսակցութիւնները և վարմունքը ճաղել ու ծաղրաբանել և մտաւորաց վրայ ալ զուր բամբասանքներ, և այլն և այլն . . . Որոնց ամենքը՝ ստուգիւ կըսեմ որ ցաւօք և թաղծութեամբ կը ընուն այն սիրտերը որ արժանի են ազգասէր անուանին։ թէպէտ դուք ծաղրաշարժութեան համար կը գրեք։ Ընդհանուր կարծիք մը կը համարինք լրագրապետիմը աղ-

1 Քառասուն խելացի մէկտեղ եկան՝ առ բառը չբերցան ասկէ ուրիշ կերպ կարդալ, այնքան որ գիրը մաքուր էր։

2 Դեռ դրագիտաբանն յոդուած դրված չելալը չգիտեր կոր գուցէ չհասանելով և չհասկնալուդ։

գին կողմանէ վայելելիքը շնորհակալութիւնն ըլլալը։ բայց որչափ տխրութիւն, երբ սոյն հինաւուց համարումնուս[1] խորշակահար կործանումը կը նշմարենք, այն է փոխանակ պատուվելու և յարգըվելու՝ անարգվելուն և փոխանակ յարատևոդվելուն[2] արհամարհվելուն և փոխանակ գրգվելուն՝ վռնտվելուն ներկայ կը գտնուինք չատ տեղ և գրեթէ ամեն տեղ ձեր պատուական մեղուին իր խայթոցներուն արգասեօքը։

Մենք մինչև մեր այս երկտող գրութիւնը[3] ընելու ժամանակին հրապասէինք, որ ձեզի ծանօթ բարեկամներնուդ մեկը իցէ թէ սոխպեալ իսիրոյ բարեկամութեան՝ ձեր մեղուին իր չափազանց զուարճախօսութիւններուն համար արհամարհվելն ու բանբասվիլը ձեզի իմացնելով, կամ դուք անձամբ իրաղեկ այսմ ընելով և յայտնանէ ձեր զուարճախօսութեան ընթացքը կը փոխեք կամ կը մեղմացնեք։ Նա սակայն մեր այս յոյսը 'ի թերև ելաւ, բայց և այնպէս հարկ չէր մեզի այս երկտող գրութիւնը[4] առ ձեզ ուղարկելով հասարակութեան կողմանէ մունիտիկ կամ թեղեկուաֆ ըլլալ ձեզի։ Այլ ձեր անցեալ շաբթվան բարեկենդանի կատակախօսութեան մէկ գայթակղելի պատուղը զգականելով, որ եթէ իսկբոա պատահման տեղոյն և քովի դրացիին հրէայ բժիշկ ըլլալուն անանկ մեկ գերդաստանի մը վրայ դիտմամբ թշնամանք ըրած կը սեպուիք, որ կարծեմ իր պատիւը ձեզմէ խնդրելու ըլլայ՝ պատասխանատուութեան չեք կրնար կարոխանալ։ . . . ուստի մենք ալ գրեթէ. ազգասիրութենէ՝ գրեթէ ձեր մեղուին պզտիկ բարեկամութիւն մը ընելու նպատակէն շարժեալ կը համարձակինք այս երկտող[5] նամակաւս ձեզի բարեկամնալու՝ յուսալով՝ որ խնարչաբար կը մատուցանեք ձեր պատուական լսելիքը։

1 Երկու տող վերը ունեցած կարծիքը, հոս համարում եղեր է։
2 Նամակին հեղինակը այս բառը հոս մեր դիտցածէն տարբեր նշանակութեամբ մը դրած է. պէտք է որ մեկնէ։
3 Այս պարօնին ամեն մեկ գրքի երեսը մեկ մեկ տող է եղեր։
4 Եթէ կամ տաս տող ալ աւելցաս՝ դեռ երկ տողը հատող չեղար։
5 Կերևայ թէ այս բառը շատ նշանակութիւն ունեցած պիտի ըլլայ վասն նամակագիրը միայն գիտէ։

Այսու յուսով մնամ միշտ

Ընծանօթ ՅԵՂԲԱՐԵԿԱՄ.

Մ. Տ. Ճ.

Ինչպէս որ յայտնի կ'երևայ՝ այս նամակը գրողը բարեկամաբար կը փութայ մեզի ծանուցանելու թէ, մեր հասարակաց զուարճախօսութեանց պատճառով ազգին ի մասնաւոր մասին աչացն առջև մեղուն իր յարգը կորսնցուցեր է. և եթէ ալ Ազգէն շնորհակալութիւններ ստացած ատենս անարգանք և արտունջ կ'ընդունիմ.

Պ. Նամակագիրին իմաստուն դատած անձերն ալ իր խելքէն են նէ՝ իրաւ է ըսածը թէ չեն հաւնիր կորվան զի իր նամակը դեռ չընդունած անանկ անձերէ գանգատներ լսած եմ իր բոլորին պէս թէ Ազգը վար կը դարնեմ կոր որով Ազգս պատուելու ու փառաւորելու փոխանակ՝ զ'անի անպատիւ կընեմկոր յայտս օտար ազգայ ծաղրաշարժութեան համար ան աս կը բամբասեմ կոր և հրէայ բժիշկ դրացի ունեցող ընտանիքի մը յայտնի թըշնամանք կ'ընեմ կոր.

Այս խօսքերուն վայելուչ պատասխանը արհամարհոտլուութիւն մըն էր նէ ալ, նամակագրին և անոր պէս մըտածողներուն ամենուն մէկէն մէկ անգամ մը քիչ մը խօսք ընելը մեզի պարտք սեպելով և Մեղուն ընթերցողներէն ալ իրենց ձանձրութեան թողութիւնը խնդրելով նախ և առաջ կը հարցնենք անոնց թէ մեր յառաջաբանը կարդացած չե՞ն մի. և եթէ միտքերնուն ելած է դարձեալ կարդալ խնդիրք կ'ընենք.

Մինչև այսօր մեր Ազգին մէջ ձեռքը գրիչ առնողները, իրենց ազգին բարութիւնմը ընել համարելով զանի յանչափս գովելը և փնտռելի չողջբարութեամբ մը նոր պակասութիւնները ծածկելը, ընթերցողներն ալ սովորեր են միշտ գովեստ լսելու ուստի իրենց ծանր կը թըւի կոր երբ մէկ ճշմարտասէր մը կամ Ազգին ճշմարիտ բարութեանը փափաքող մը, անոնց կարծեցեալ վէհանձնութիւնը ամենաթեթև կերպով մը վիրաւորէ. անարգանաց և անիծից արժանի կը դատապարտվի կոր այն որ իր

Ազգին պակսութիւնները ամենուն աչքն առջև դնել ուխտ կ'ընէ. բայց կը կրկնեմ ինչ որ վերը ըսի, բարեքաղաքաբար միայն նամակին հեղինակին խելքէն եղող սակաւաթիւ անձերն են այս վճիռը տալողը.

Մենք կը կարծենք թէ լրագրապետ ըլլայ, հեղինակ ըլլայ ամենևին չըպիտի մոռնայ թէ Ազգը ինչպէս պիտի ընդունի վինքը, ի՛նչ անուն պիտի տայ անոր. ինք պարտաւոր է Ազգին կատարելութիւնները գոված ատենը, պակսութիւններն ալ հաշուելու և ցուցնելու. Ո՛ր անխելքն է այն որ կը համարձակի ըսել թէ վերը մը ծածկելով կը բժշկվի. մի թէ չիգիտե՞ր թէ մենք լուենք նէ՝ մեր պակսութիւնները օր օրի աւելի ամուր կը հաստատվին մեր վրայ և այն ատենը ամեն աշխատութիւն ոչինչ կ'ըլլայ. օտար ազգերո՞ւն թողունք մեզ ծաղրելը ու հարիւր պակսութիւն մեր վրայ դիզելը. Օտար ազգերը ի՞նչպէս կրթված են, անոնք ալ մեզի պէս պակսութիւններ չունէի՞ն և չունի՞ն դեռ մինչև հիմայ. Յն աւելի լուսաւորեալ և էն քաղաքակիրթ ազգերը յատկապէս ժողովրդեան և տէրութեան վարմանց պակսութիւնները ծաղրելու համար լրագիրներ ունին և այն ազգերը անանկ համոզված են և իրաւամբ թէ այն լրագիրներուն մէկ թերթը բարոյականի դասատու Փիլիսոփայի մը մէկ հատոր գրքէն աւելի ազդեցութիւն և արդիւնք ունի. Մեր մէջը այնքան տարիէ՝ի վեր բարոյականի ուսուցիչ լրագիրները այնքան ազդեցութիւն չունեցան որքան որ ունեցան զանի Աֆեպէ Հէֆեյեսի և Պէշ պէշ Բեսալէի ընված հատորները. Բազմամիպին իմաստուն խօսքերով լցուն բարոյականի ազգու և համոզիչ յորդորանքները, ճանճրութեամբ և քաւնը կրկին և կրկին վանելով կարդացողները՝ի հարկէ այնքան չօգնեցան, որքան որ այն վերոյիշեալ երկու հատորներն շարունակ ժպիտ՝ի յայտնք՝ սխորժակով և հետաքրքրութեամբ կարդացողները.

Ասենք երկու Փիլիսոփայ կանանց վրայ մեկմեկ ճառ գրած են. մեկը շատ գովելով զկիներն, միւսը պարսաւելով. վերջինին գացեր հարցուցեր են թէ միւսը գո-

մած տանելը ինք ի՞նչու պարտաւած է նէ՝ «Ոչ ըսել է, ինչպէս որ պէտք են ըլլալ զանի գրեր է. ես ալ ինչպէս որ են՝ ան գրած եմ.» Ասոնց երկուքին գրածին մէջ սա տարբերութիւնը կայ որ գովողը կը պարտաւորէ ենթադրեալ ինչպէս որ է, անանկ մնալու. պարտաւորողն ալ կ'ըսէ թէ ինչպէս որ պէտք է անանկ ըլլալ. ասոնց ո՛րը արժանի է արդեօք շնորհակալութեան. Պակասաւոր անձանց առջև իրաւ է որ անագանաց նեռին արժանի կ'ըլլայ. բայց անոնք ալ որ կը ճանչեն թէ իրենց մէջը կայ ան պակսութիւնը և անոր տէրը՝ մեծ շնորհակալութիւն կը մատուցանեն.

Ես ալ միտքս դրած եմ, բարեկրթութեան յորդորանքը բարոյականի վրայ խօսող երևելի անձերէ քաղած տեղս, մեր Ազգին անհարտակաւ պակսութիւններն ալ ծաղրելով պարտաւեմ, որպէս զի ընթերցողներուն մէջէն ամեն մէկը իր պակսութիւնները ճանչնալով ինքզինքը ուղղելու ջանայ, վասն զի եթէ քիչ շատ ղուարճալի կերպով չըլլայ, աղէկ գիտեմ որ զանի կարդացողները շատ քիչ պիտի ըլլան և անոնք ալ ճանձրանալով պիտի կարդան.

Իմ ընթերցողներս այս մասին համար իս անարգեն, արհամարհեն նէ՝ մեղուն գետնէ գետին զարնեն նէ՝ շնորհակալութիւն ընդունած է աւելի ուրախ պիտի ըլլամ՝ աներկբայ ըլլալով թէ ասանկ ընողները իրենց յանցաւորկամ պակասաւոր ըլլալնին ճանչցած են. շնորհակալութիւնը ուրիշ ատեն կը պահանջեմ ես անոնցմէ. Ընտանեկան ցաւոց մէջ դառն դեղ տրվող կամ վերքը կոտրելու աշխատող բժշկին ու վիրաբուժին հայհոյողներն են ասանկները որ իրենց հիւանդութիւնը անցնելէն ետքը կ'իմանան և կը խոստովանին ինչ շնորհակալութիւն կը պարտին իրենց սիրտը կսկծեցնող ու հոգին ցաւցնող անձերուն 'ի յօգուտ կենաց իւրեանց.

Նամակագիրն ալ եթէ չենք սխալիր, գուցէ այս տասակ անձերէն ըլլալով և ինք ալ անշուշտ իր մէկ պակսութիւնը Մեղուին մէջ տեսնելովն է որ բարկացեր է մեզի դէմ և այն բարկութեան իշխանութեան ժամանա-

կեն է գրեր այն և եկ պակաս խօսքերը, յաւելցնելով ալ թէ մենք զուր բամբասանքներ կ'ընենք եղեր ազգայնոց վրայոք։ Գոհութիւն Աստուծոյ ազգատեցութեան վատ անունը ուրիշները մեր վրան դնեն նէ ալ, մենք ուրախ ենք, սիրտերնիս քննելով թէ այդ ամենագարշելի մեղութիւնը երբէք չէ իշխած մեզի մերձենալու, որով Ազգին չունեցած պակսութիւնը ունեցած ցուցընելու երբէք կամք ըրած չըլլալէն զատ՝ ամեն ատեն շատ ալ մեծ ղգուշութիւն ըրած ենք միշտ եղածէն ալ պակասը ցուցընելու։ Ակէ զատ նամակագիրը երբոր կը հարցնէ մեզի թէ բժիշկ հռեայ դրացի ունեցող հայ ընտանիքը մեր կողմէն թշնամանք կրած ըլլալով, իր պատիւը պահանջէ նէ ի՞նչ պատասխան ունինք տալու՝ կ'ըսենք իրեն թէ ինք այն կողմէն անհոգ ըլլայ։ այն ընտանեաց տէրը ինք չըլլալէն ետքը, մեր տալիք պատասխանին վրայ ալ մտածելու ժամանակ չկորսնցընէ և անոր համար սիրտը անհանգիստ թող չըլլայ։ Դրիչը ձեռքս չառած ուխտ ըրած եմ կարելի եղածին չափ շողոքորթութենէ հեռու փախչելու։ և ճշմարտութեան առաջնորդած շաւղին հետևիլը սրբազան պարտք մը համարած եմ ինծի։ լրագրապետի մը պարտքն համարված է ամեն բան պայծառ աչքի տեսնելու և նոյնը անփոփոխ իր ընթերցողաց հաղորդելու։ ըսել կ'ուզեմ որ կատարելութիւնը պակսութիւն դատելու չէ, պակսութիւնը կատարելութիւն հռչակելու չէ։ վաստակի կամ պատուոյ կամ համբաւի յուսով Ազգը խաբելու չէ։ իմ պարտքս ես ասանկ կը ճանչեմ։ պարոն Նամակագիրը իր իմաստուն դատած ընկերներովը հանդերձ՝ ինչպէս կ'ուզէ թող անանկ ճանչէ, դատէ ու հռչակէ, հերիք է որ իմ ըսածներնուս ստուգութեանը վկայեն Ազգին յառաջադիմութեանը փափաքող և աշխատող ճշմարիտ իմաստունները ու չէ թէ իր այնպէս դատած անձերը։

ԹԷՊԱԻՈՐ ՏԳԱՅՐ

ԹԻՒՏՕՐ ՎԵՐՋԻՆ

Ասիկայ Հենրիկոս ուԹերորդին և Յովհաննա Սէյմուրին տղան էր. հայրը իր Մարիամ ու ԼղիսաբէԹ քոյրերէն աւելի ասիկայ արժանի տեսաւ Թագաւորութեան. ԼօմԹը տարու էր երբոր Հենրիկոս Ը. իր անօրէնութիւններուն համարը տալու գնաց Ստուծոյ. Ա անօրէն մարդուն վաւակը՝ որ Լղդուարդ Օ. անուանեալ իր տեղը նստաւ, ազնուաբարոյ տղայ մըն էր. Պղտիկուց քանի քանի անգամ ծանր հիւանդութիւններ քաշեց, անանկ որ քիչ մնաց կը մեռնէր կոր. բայց Աստուած անոր մարմնոյն տկարութեանը փոխարէն՝ զարմանալի խելք տրվեր էր իրեն. Յէրօմ Բարատան՝ ան ժամանակի ամենէն երեւելի գիտուններէն մէկը սքանչելիք մը պատմելու պէս կը խօսի ասոր համար. Պատմութիւն, Գաղղիերէն, Իտալերէն ու Լատիներէն լեզուները, Աչխարհագրութիւն, Աստղաբերութիւն, ասոնք ամենն ալ գիտէր. Տասնը չորս տարու էր, Յունարէն թղթակցութիւն կընէր իր պապի մօրքրոջը՝ դժբաղդ Յովհաննա կռէին հետ. Սատանաներն ոտանաւորներ ալ կը շինէր անոր համար շատ սիրուն ու գեղեցիկ. իր վարքը գրող պատմագիրներէն մէկը՝ հեղ, մարդասէր, ժիր ու արԹուն տղայ մըն էր, կըսէ ասոր համար. բայց առանց ամենէն աւելի չափազանց բարեբաստութիւն ունէր. Դեռ Թագաւոր չեղած, այսինքն երբոր դեռ վեց տարու էր, շատ կը սիրէր Լօնդրայի մէջ պտտիլ իր պաշտօնեայներուն հետ. Ուր տեղ որ հինուվին լաԹերով տղայ մը կը տեսնէր, կը հարցուներ. «Հայրդ ի՞նչինի է, կըսէր. ԹԷ որ շատ տղքատ է, քեզի աղէկ լաԹեր շինելու կարողութիւն չունի՝ իմ հայրս շատ հարուստ է, բոլոր Անգղիայի ազքատները կրնայ հագվեցուցնել. իս ձեր տունը կը տանի՞ս մի, որ նայիմ ԹԷ հայրդ ստրկի կարօտութիւն ունի՞. որովհետև ինծի

չատ ստակ կուտան, ես ալ անոր քիչ մը ստակ տալով չեմ աղքանար։»

Իր առաջնորդը երբեմն աղքատ արհեստաւորի մը տունը կը տանէր անիկայ, երբեմն ալ ժամանակին ճոխորդութիւնէն ինկած պաշտօնատարի մը տունը։ բարեբախտը ան տունը, ուր որ արքայորդին ոտք կը կոխէր։ Լդուարդ մինչեւ որ վրայի ստակը ողորմութիւն տալով չէ հատցուներ պալատը չէր դառնար։ բնականաբար առատաձեռն ըլլալով անանկ ալ մարդասիրութեամբ կը շնորհէր, որ մէկու մը բարերարութիւն ըրած ժամանակը ինք անկէ կընդունի կոր կը կարծուէր։ թէ որ դիպուածով երեսը կախ ու պարապ տղայ մը տեսնէր՝ կը հարցուներ։ «խաղալիք չունի՞ս»։ Ան ալ երբոր պատասխան տար թէ ծնողքս աղքատ են, ինծի խաղալիք առնելու կարողութիւն չունին՝ «ես քեզի կուտամ կըսէր արքայորդին, պալատը ինծի դեղեցիկ ընծաներ տրվող տրվողի կըլլան։ թէպէտ ինծի տրված խաղալիքներուն ամենուն հետ չեմ կրնար խաղալ, բայց ի՛նչ ուզեմ կրնամ ընել անոնք։ վաղը եկո իս գտիր պալատը, իմ պաշտօնեայներուս անունդ զուարցելու ըլլաս նէ՝ քեզ ներս կառնեն։ քեզի հետ ազէկ մը խաղալնուս ետքը՝ որը կուզես նէ առ հեռդ ուար»։

Շատ տղայք պալատը արքայորդիին հետ տեսնվելու գալով՝ խաղալիքէ զատ բաներ կը տանէին հետերնին։ Շատերը պարտիկան կամ տէրութեան դէմ յանցանք մը ընելով դատապարտված մարդոց տղայք ըլլալով առիթ կունենային՝ անոնց ընտանիքը արքայորդիին ձեռքովը Հենրիկոս ութերորդին աղերսագիր տալու։ Լդուարդ սիրով յանձն կառնէր անոնց խնդիրքը կատարելու։ և Անգլիայի քար սիրտ թագաւորը աս զարմանալի տղին աղաչանքին չէր կրնար դիմանալ։ որ իր խելքովն ու աղնութեամբը թագաւորին սրտին տիրեր էր։

Անգլիայի ամբոխը նստած ժամանակը դեռ եօթը տարու չիկար։ աս պատճառաւ տանջվեց իշխան, կամ խնամակալ դրվեցաւ, որ անոր անուանովը տէրութիւնը

կառավարեն։ Թագաւոր նստելուն պէս՝ խոհեմութիւնը պահանջեց մեծ զգուշութիւններ ընել ազգայ թագաւորին համար, որ թշնամիները վնաս մը չը հասցունեն։ Ան երջանիկ պատահելները վերջացաւ։ Վասն զի կը վախնային որ իր Մարիամ ու Եղիսաբեթ քոյրերուն կուսակիցները կը մեռցունեն զինքը։ Ժողովրդեան ազգը հետ խաղալն ալ վերջացաւ։ Բայց Եդուարդ Զ. չի մոռցաւ անոնք։ ուր որ ինքը անձամբ չէր կրնար երթալ բարերարելու՝ իր պաշտօնեայներն ու ապատաւորները կը խրկէր։ Ասանկով ժողովրդեան սիրելի կրնար կոր ու իր տաւտաձեռնութեան համբաւը ազգատաներուն մէջ հռչակվելու վայ էր։ Բայց երբոր ասանկ մէկ կողմէն իրաւաքինութեան երեխայրիքը իրեն բարեկամները կը շատցուներ ու մէկ կողմէն ալ իր սքանչելի խելքը իրեն վրայ զարմացողներուն թիւը կաւելցուներ, Եդուարդ Զ. ինքը իր փառասէր իշխաններէն բռնադատվելով՝ ամեն օր մէկ մէկ ոսկանութեան վճիռ կը ստորագրէր։ որուն շատ կը ցաւէր իր փափուկ սիրտը։ Առաջ հօրը ողջութեան ատենը դատապարտեալներու համար միջնորդութիւն ընելով կրնար կոր ազատել։ բայց հիմայ թագաւորն ինք ըլալովը այնչափն ալ ընելու կարող չէր։ Օրվանը մէկը իր իշխանութիւնը բանեցուցնել ուզելով՝ մէկու մը դատապարտութեանը դէմ կեցաւ, բայց երկրորդ օրը դեղեցին զինքը։ ու մեռաւ՝ 1553 յուլիսի 6 ին։ Մեռած ժամանակը՝ դեռ տասնըվեց տարու չը կար։

ՎԵՐՋ ԹԱԳԱՒՈՐ ՏՊԱՑՈՑ.

ՊԱՆԴՈՒԽՏՆ Ի ՊԱՆԴՈՒԽՏ

ՄԱՀՈՒ ՄԱՀՈՒՆ ՄԻՋՈՑ[1]

« Կը թրթռայ դեռ անշուշտ քու տկանջներուդ մէջ այն հրեշտակային քաղցր ձայնը որ Ընչանցոր կ'աւետէր

1 Տես Գ. 1, 12

մեղի. և իբրև սոխակ՝ իր վարոդը արթնցընելու կուգար արեգական առջին ճառագայթներուն հետ. այն ձայնը, զոր դու իմ Վաղամեռիկ քրոջս ձայնին կը նմանցընէիր, և այն պատճառաւ կը յորդորէիր զիս իմ միայն անուանը ճանչած և քու նկարագրութեամբդ կերպարանքը երևակայած քրոջս վրայ ուշենալու սէրս և անոր տանելու կնամբներս անոր փոխելու, այն ձայնը. զոր երբ ես ալ կը լսէի, կը յափշտակվէի ինքզինքս կորսնցընելով և երկնային ներդաշնակութեան մը ուշկընդիր կը կարծէի զիս. այն ձայնը, որուն արձագանգն անգամ եարքերը իմ երիտասարդութեան առեն աչքերս արտասուած բազմաթիւ կաթիլներ կը խլէր, զորոնք կը չանպի թէ անկէ և թէ քեզնէ ծածկելու ընդունայն աշխատութեամբ. վասն զի դու կը հասկընայիր ու կը ծաղրէիր զիս և երբոր անոր քովն ալ կը խնդայիր վրաս՝ ամօթ ու սրտմտութիւն կը տիրապետէին ինծի.

« Կը յիշես՝ի հարկէ թէ երիտասարդութեան սեմց վրայ ոտք դրած առեններս, ի՞նչպէս սկսանք մէկ մէկ վախնալ, ամչնալ, իրար յարգել, զոր առաջ չունէինք իրարու ներկայութենէ փախչիլ, թէպէտ ես ալ ինք ալ (անշուշտ) կը կամէինք իրարմէ չըզատվիլ չը հեռանալ. և այս կամքերնիս ալ կը չանայինք իրարմէ պահել, մինչև այն առենը որ ալ օր մը դուն կանչեցիր մեզ քու քովդ, երբ ես 19 տարու եղած էի ու անի 17 տարու՝ և մեղի հետ այսպէս խօսեցար.

« Շահանդուխտ զաւակս, դուն ասոր եղբայրը չես. » դուն իմ զաւակս ես, բայց որդեգիր ես. երկու տա- » րու էիր, քու ծնողքդ մեռան՝ քեզ իմ տունս առի, » ասոր հետ մէկտեղ սնուցի և եարը երբոր քու կատա- » րելութիւններդ ալ սեսի՝ որոշեցի անանկ վիճակի մը » մէջ դնել ձեզ երկուքնիդ՝ որ ամենևին իրարմէ չըզատ- » վիք ու մէկտեղ ապրիք. վերջապէս շահանդուխտ ա- » հա քու մարմնոյդ կէսը. և վաղթանք ահա քու ալ » մարմնոյդ կէսը. դուք ես քիչ առենէն հեռանամ » ձենէ. ազէկ սկանչ դրէք իմ խօսքերուս որ յաւիտեան

» ելնելու չեն ձեր մաքէն. ապրեցէք իրարու համար,
» մեռէք փոխան իրարու. Սիրեցէք իրար, և ձեր սի-
» րոյ հուրը մշտավառ ըլլայ. այս տուռնը ձեր սրբազան
» տաճարն ըլլայ. ուր ոչ ատելութիւն ոչ խռովութիւն,
» ոչ կասկած, ոչ նախանձ, ոչ անհաւատարմութիւն
» կրնան մերձանալ, եթէ դուք անոր մէջ ըստ արժա-
» նւոյն ծառայէք և ամուսնական պարտաւորութեանց
» մէջ պակասաւոր չըգտանըվիք. Լթէ նեղութիւններ
» կրէք. մի հոգ ընէք, կ'անցնին անոնք ու կուգան բա-
» րի օրեր. ցաւ մը ունենաք, տրտմութիւն մը ունե-
» նաք, չըլլայ որ անոր համար տրտնջէք. Տէրոջը յանձ-
» նեցէք դուք ձեզ՝ Ընի կարող է ամեն դժուար դիպ-
» ուացքներ ձեզի. մի վհատիք, մի փախնաք ճախորդու-
» թիւնէ. Լթէ ձեր սէրը բակտեր, ձեզ անջատել ուզող
» Թշուառութիւն մ'անգամ պատահի՝ մի յուսահա-
» տիք. զի Տէրը սուրբ սիրոյ դժբաղդ հարուած մ'ընդ-
» դունող, իրենց սիրոյն հաւատարիմ մնալնուն կամ վը-
» րէժխնդիրն ըլլալնուն համար զոհ եղող անմեղ անձանց,
» որոնց չըգիտցաւ երկիրն յարդը ճանչել՝ երկնից մէջ
» պատրաստած է հանգիստ, ինչպէս ինծի ալ, որպէս
» կը հաւատամ, պատրաստած է իմ այս աշխարհի մէջ
» քաշածներուս փոխարէն. Ընպրեցէք դուք ու յիշա-
» տակս անմոռաց պահելով, օրհնեցէք իս՝ ես ըլլայ իմ
» վերջին խնդիրքս։»

« Ես խօսքերէդ 11 օր ետքը երբ այն աղետալի հար-
ուածը տրվեր մեզի վերանալով դէպ 'ի յերկինս ու մեզ
մինակ Թողուցեր այս Թշուառութեանց վայրերուն մէջ,
ուր անփարձ և անտեղեակ և դեռ համբակ՝ միայն մեր
սիրոյն առաջնորդութեան ու պահպանութեանը յանձ-
նելով մեզ գնացեր . . . բայց սէրը մեզի նենդեց, մեր
Թշուառութեանը վրայ խնդալու համար. դուն չըգտա-
նըվեցար քովերնիս որ քու խրատներովդ մեր ընթացքը
ուղղեիր և գուցէ քու նախատեսութեամբդ այս յանկար-
ծահաս աղէտքներէն խմանալով մեզ զգուշացընէիր։»

« Ընհ. երբ ես ու ան դեռ քու սգալի մահդ կ'ողբ

բայինք և մեր անոորոգելի կորուստը կ'աւաղէինք՝ ուան զիս իր ներդաշնակաւոր ու համեղ ձայնովն և համոզիչ խօսքերովն կ'սփոփէր, և ես ալ իմ կողմէս անոր ցաւերն թեթեւցընել կը ջանայի քաղցր խօսքերով, ու անոր առանձնութեան սրտնեղութիւնները փարատելու համար քովէն չըհեռանալու կ'աշխատէի սպասաւորներուն ձեռքով գործիքս տեսնելով. ա՜հ. երբ դեռ քու վերջին խօսքերուդ վրայ մտածելու, քու խրատներուդ ու խորհուրդներուդ հետևելու ատենն եկած չէ՛ր մեկի համար, և միայն սրբութիւնիս մեղ կը յորդորէին, մինչև այն ատեն վարած կենցաղնուս կերպէն տարբեր կերպով մը իրարու հետ ապրելու, որուն դուն ալ, մենք ալ, մեր վիճակն ալ, մեր սիրտն ալ հաճութիւն տրված էին և կամք ըրած էին, ա՜հ. մայր իմ այս վարանման վայրկեաններուն մէջ էր կի հետևեալ դէպքը պատահեցաւ որ իր եռանէն 'ի քարշ բերաւ անհամար ընկճող ցաւեր ու վիշտեր.

Ը-ուրն ուՒՆԿԻՆ.

ՍՈՒՐԲ ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

ՄԵԾՈՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԳԼՈՒԽ Գ.

Թուականն որ մեր Հայոց բոլոր ազգը ուրբ Հայրապետներուն (Կաթողիկոսներուն) ջերմով և խանդավառով, երեցին Թէոդոս (Դուր) ընտրու

թուլթեամբ կը հրամեք ծովու և ցամաքի, և ջրկայ մարդ երկրիս երեսը՝ որ ձեր ուժին դէմ կենայ։ Մեր անտուտ գրուած պատմութիւնները կ'ըսեն, թէ ձեր կարիճ Նպինիքը, բոլոր Եւրոպայ՝ ատակ առնելէն ետև, անցին տիրեցին Ասիայու երկրին, որ Սինաէն (Չինէն) ինչ փան Բատիչք (Իսբանիայ) դէմ կեցող մը չիմընայ, ամենքը ձեր տիրը անդան։ Եւ այսչափ մեծ իշխանութեան նըդ ատակը, մէկն ալ մենք էինք։ որ կայսերքը աս Հայոց աշխարհքը՝ իրենց մեծ և սիրելի գերդաստանը է (մուխամեան) կ'ըսէին։ Ասոր համար մեր Տրդատ թագաւորը իր աղայութեան ատենը, իր հայրը Խոսրով ապոնոզ ազգականաց ձեռքէն փախչելով, եկաւ ձեր երկիրները։ ուր ապրեցաւ և մեծցաւ։ Եւ ղինքը թագաւոր ըրիք՝ որ եկաւ նստաւ հօրը աթոռը։ Այսպէս ալ ետոքը իր սուրբ հաւատքը որ ի Քրիստոս, տուաւ սուրբ Եպիսկոպոսապետն Հռոմայու։ (Հոն երթալով սուրբ Գրիգոր Լուսաւորչին հետ) որ Լուսաւորեց մեր թի մէջ մընացած բոլոր Հայոց աշխարհքը։ Հիմա այս մեր սուրբ հաւատքը, կուզենիր ջնջել անհաւատ Պարսիկները։

» Մենք ձեր անյաղթելի ուժին վստահնալով, անոնց քանի մը հրամանին դէմ դարձանք։ և ալ շատ կայ՝ որ կը հաղորդորին կոր ընդդիմանալու։ Մեռնիլը աստուածապաշտութեամբ տալի աղէկ կը սեպնինք, քան թէ ապրիլ զան ուրանալով։ թէ որ դուք ալ քիչ մը մեզ կրունակ կենալու որ ըլլաք, չէ թէ միայն չենք մեռնիր, այլ երկու կեանքով հոգւոյ և մարմնոյ կապրինք։ թէ որ այս մեր աղաչանքը քիչ մը ուշանալու որ ձգէք, անտարակոյս այս կրակը կը հասնի կը պատէ և այլ շատ աշխարհներ։ »

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԳԱՂԼԻԱՐԷՆ ԵՐԵՍ՝ 319.

Այս մեր սուրբ Հարց ժողովոյն թղթին բացագրութիւնը հոս կը դնենք, ամենուն հասկանալի ոճով մը, որ Գաղղիերէնը Եղիշէին պատմութեան մէջ գրուած է։ Ծանօթ. 26. երես 319.

Այս Հայոց ապգիս մեծ ժողով քին Թուղթը՝ քաղաքական (տեվլեթի) և եկեղեցական որ գրեցին Թէոդոս կայսեր, մէկ մեծ նշանաւոր վկայութիւն մի է, թէ ինչ ասոիճանի փառաւորութեան մէջ էր ան ատենները Հռոմայեցւոց կամ Հռոմոց (Յունաց) ազգութիւնը. Բոլոր Հայաստան՝ որպէս թէ անոնց մէկ կարուածն էր, (մալիքանէ) կամ մէկ ամուր պատը, ընդդէմ բարբարոս Պարսից և Թաթարաց արշաւանացը որոնց Հոնք կ'ըսէին.

Նա այս այսպէս ըլլալը յայտնի երևցաւ ատենով և ետև ետև. Վասն զի երբոր կայսերը Պօլսոյ, անհոգութեամբ բանի մը տեղ չդնելով աչքէ ձգեցին, մեր Հայաստանը, որ կորսընցուց կամաց կամաց իր ուժը. այնպէս ալ քանի գնաց իրենց ազդեցութիւնը ակարացաւ, և վերջապէս կործանեցաւ ընտոր մերը.

Հայոց Թագաւորութեան երկրին դիրքը, որ էր երկու մեծամեծ ինքնակալութեանց մէջը, ի հարկէ անոնց մէկուն հետ, կառավարութեան խելքը իրենց կը սարվեցներ, որ ուխտուդաշինք (ալիանցա) ընելով՝ պինտ կապվին. Որովհետև մեր Արշակունի Թագաւորը, և Պարսից Թագաւորք մէկ անէն կամ ցեղէն էին, անոր համար անոնց հետ միշտ անքակտելի բարեկամ էին ծեծի և խաղաղութեան ատենը. Տես մեծն Տիգրանը, Միհրդատը և իրենց յաջորդները մինչև գրեթէ մեծին կոստանդիանոսին ատենները միշտ հաւատարիմ դաշնակից էին Պարսից՝ որք անոնց և Պարթևաց և Մարաց կարիճ զօրաց գլուխ ըլլալով պատերազմեցան Հռոմայեցւոց դէմ. և Սիլա, Լուքուլլոս, Փոմպէ Բռատոս և Անտոնինոս զօրապետաց ուժը կոտրեցին և զօրքը ջարդեցին. Բայց երբոր Սասանեանք Պարսից ամբոխը որ յարուցանեցին, Հայք քակեցին կտրեցին այս կապակցութիւնը, անկէ ետև անոնցմէ հեռանալով կապվեցան Հռոմայեցւոց հետ. Նոյն ատենները որ Բրիստոնէական նուրբ հաւատքը տարածեցաւ, և անոնք ալ դարձան ի Բրիստոս ինչպէս մենք, այս կապը աւելի՛ ֆասքի-

[ՀՐՎԵՑԱՒ. որ պիտի ըլլար մշանջենաւոր, թէ որ երկու դիտաց՝ ալ խոհեմութիւն և իրենց օգուտը՝ կանոն բռնելու որ ըլլային իրենց գործոցը և բանաւոր տերութեանական վարչութեան.

Երբոր Հայոց Թագաւորը Խոսրով դանակով զարնուելով մեռաւ 258ին մարդասպան Ընակէն, որն որ Պարսից Թագաւորը Սասանեան կեղծաւորութեամբ խաւրեր էր Խոսրովին քով, Խոսրովին մէկ մանչ զաւակը Տրդատ՝ բարեկամ Նախարարքը՝ փախուցին ի Հռոմ. ուր կեցաւ մեծցաւ և սորվեցաւ՝ վարժեցաւ այն ժողովուրդոց ընկերն վարքը և կրթութիւնը. Նաև պինուորական կարգը մտաւ, և Լիկիանոս զօրապետին քով ցցուց քաջութիւն և կարգաւորութիւն. կարծես Հերքիւլէսի մը ուժովը. Հոն 28 տարի անցընելէն ետև, Դիոկղետիանոս կայսրը՝ պինքը ըրաւ Հայոց Թագաւոր, և տուաւ ձեռքը մենծ գունդ մը զօրաց որոնցմով դարձաւ Հայաստան, տիրեց և նստաւ իր հարցը աթոռը.

Այս Խոսրով Թագաւորիս քանի որ եռաքի շունչի բերան էր, հրամեց որ խարդախ և չար Ընակը անով տեղով սրի տան սպաննեն. Այսոր զաւկիներուն մէկը՝ կոտորածեն խալսեցաւ, որ իր ծծմայրը, Նոյնէ Քրիստոնեայ, իրեն հետ բերաւ Խայսերի. Հոն զանի մկրտեցին. և դրին անունը Գրիգոր. Որ մեծնալով՝ ինչպէս պէտք է սորվեցաւ Քրիստոնէական կրօնը. այնպէս ալ լեզուն գրականութիւնը և վարքը Յունաց. ուր իմաստութիւն և գիտութիւնք ի մեծ պատուի էին ան ատենները. Նաև՝ ազդեցութեամբ Հոգւոյն սրբոյ, որ անտարակոյս կամեցաւ տալ առիթ մը մուցընելու իր հօրը Ընակին ըրած չարութիւնը, գնաց մտաւ ի ծառայութիւն Տրդատ Թագաւորին և եկաւ ի Հայաստան հոն եռաքը 301ին, Թագաւորը և իր բոլոր Հայոց ազգը դարձուց ի Քրիստոնէական հաւատքը. ասոր համար ելաւ ազգիս Հայոց Լուսաւորիչը.

Այս ամեն դիպուածները, որ ընտոր ազգս Հայոց սուրբ Աւետարանին դարձաւ հաւատոց՝ մենծ շահ և

ոչուտ կ'ընէ Քրիստոնէի մը գիտնալը։ Բայց մենք հոս
ընենք կրնար աւելի երկնցընել այս նիւթիս վրայ։ Ուստ
ի այս ատենս որ հաւատքը ճշմարիտ Աստուծոյ օրէ օր
կը շատնար Հռոմայ տէրութեան մէջ, որ մեծն Կոս-
տանդիանոս օրինակ եղաւ իր ժողովրդեանը, սուրբն Գրի-
գոր և Տրդատ Թագաւորն ալ՝ մեծ ուրախութիւն-
ներնէն չէին կրնար կշտանալ։ Տրդատ ինչպէս գլուխ մը
մեծ թագաւորութեան։ որ օգնութեամբ Հռոմայու
կրցաւ տապալեցնել Հայաստան, անհաւատ Պարսից
պատերազմէն։

Իւ սուրբն Գրիգոր, որ Հոգւով սուրբով, սուրբ
վարդապետութիւնը փառաւորցընելով կը քարոզէր մո-
լորեալ ժողովուրդեանը, ամեն տեղ սուրբ խաչը տնկե-
լով օրհնելով պաշտել կուտար։

Այս երկուքնալ այսպէս մեծ հոգ ընելով իրենց հայ-
րենեացը, ուսուցին՝ որ ասս երջանիկ վիճակին մէջ որ
Հայաստանը դրին, հաստատուն և անխախտ մնայ միշտ
իրենցմէն ետև։ Այս բանիս համար պատշաճ տեսան՝ որ
Հռոմայ ազգաց է երթայ, Տրդատ՝ պինդ կապելու և պա-
հելու համար իր հնազանդութիւնը ուխտադրաշնքը
Հռոմայեցւոց հետ, որոնց հետը արդէն կապուած էր
երախտագիտութեան կապովը։ Իւ սուրբն Գրիգոր՝ ի-
րեն ժողովուրդովը, մի հօտ, և մի հովիւ և մի փարա-
խի (աղոլ) մէջ միանալու։ մեկ ըլլալու համար, որուն
հովուապետ է յաջորդն սրբոյն Պետրոսի, որուն Տէրն՝
մեր Յիսուս, երեք հեղ հրամեց՝ «Թէ արածէ՛ իմ ոչ-
խարներս» (սա հրամանը Քրիստոսի եկեղեցոյ, մեր սուրբ
Հայրը աղէկ հասկընալով, գործքով կատարել ուզեց)։
Ուստի եկան գացին Հռոմ մեծին Կոստանդիանոսի, և
սուրբ Սեղբեստրոս Պապին քով, հոն սուրբն Գրիգոր
իր նորահաւատ ժողովուրդը դրաւ հովուական գաւա-
զանին դիմացը սուրբ Պետրոսի յաջորդին, որուն գլխա-
ւորութիւնը է՝ ընդհանրական։ Իւ առաւ սուրբ հայ-
րապետէն ամեն կերպ եկեղեցական կանոնադրութիւնք։
և սահմանադրութիւն վարդապետութեան հաւատոյ ի

Յիսուս Քրիստոս։ Վասն զի այսպէս պէտք է որ մեկ-
նենք, աս Լեղեշէին մէջ գրուած թղթին մենծ խօսքը՝ որ
կ՚ըսէ «Թէ հաւատքը ի Քրիստոս, ընդունեցաւ ի սուրբ
Նշխարոսոսպէպէն Հռոմայ ի հարկէ աս ամենայն կանոնք
և կարգաւորութիւնք գրուեցան հռոմէական որ էր սրբ-
բազան ըլլու եկեղեցական, որ սուրբ Գրիգոր պապիկու-
թենէն ազէկ սորվեր էր և գիտէր (չըսեմ թէ՝ բուն իր
ըզուն էր)։ Այս գործքովը՝ մեր սուրբ Հայրը պարտա-
ւորեց իր նորահաւատ ժողովուրդը միշտ կալ մնալ հա-
ւատարիմ, և հպատակ այս ուխտուդաշանցը, որ կը կա-
պէ՝ մի և նոյն կ՚ընէ պերնք, ընդհանրական մի՝ սուրբ
առաքելական եկեղեցւոյն հետ։ Սուրբն Գրիգոր ձեռ-
նադրութիւն առաւ և օրհնվեցաւ ընտոր կ՚ըսէ Գրի-
գոր Կաթողիկոսը Ղերսիսեանց օրը, պատրիարք Հայաս-
տանին, և բոլոր հիւսիսային աշխարհաց։ և այլ շատ արտ-
ոնութիւններ՝ մասուանքներ, և եկեղեցական զարդա-
րանքներ, որոց պէտս ունէր, պարգևեց իրեն, սուրբ
Սեղբեստրոս Պապը։ Որուն կը վկայեն մեր բոլոր ազ-
գային պատմութիւնները։ և ոչ ոք բնաւ կը տարակու-
սի ատոյգ ըլալուն վրայ (Այս է ճշմարիտ և բուն պատ-
ճառը Հռոմերթալուն մեր Յունաւորչին)։ Թէ որ չէ,
ի՞նչ այլ մեծ պատճառ կրնայ ըլալ։ որ մեր սուրբ Հայ-
ը Թողու իր Թեմը տարիով եւ ծովով ցամաքով երկայն
ճամբորդութիւն ընէ, անցնի Անտիոքայ Երուսաղեմայ
Աղէքսանդրիոյ աթոռները, և երթայ ինչուան Հռոմ.
եթէ ո՛չ, աս սիրոյ և միութեան հոգեւոր և հարկաւոր
ուխտուդաշանցը համար։ Ինչպէս որ մեր Տրդատ Թա-
գաւորնիս ալ իրեն կոչմանէ ի՞նչ որ օր պէտք էր, ի՞նչ
որ օր ուզեց մեծն Կոստանդիանոսէն, իր բարեկամու-
թիւնը՝ կռնակ կենալը՝ դաշինքը (ալիանցան) միշտ և
մշտնջենաւոր՝ առաւ գրովք Լաթինեվար եւ Յունարէն։
Այս երկու թագաւորաց տեսութիւն ընելը՝ ինչպէս եւ
Հայրապետացը, կը գրեն մեր Հայոց ժամանակակից պատ-
միչները։ նաեւ յետոյ ամեն գրողները։ Այլ քանզի Հռո-
մայեցւոց պատմիչքը ամենեին աս չեն յիշատակեր։ Այ-

բուն գիտաւորեալն առաջ եկած պատգամին սպասելու է. անոնք ալ կրքոր կը լեռն կոր, կը հասկրցի թէ ազէկ գիտեն թէ երկրի սպառնացող գիտաւոր մը չը կրնար ըլլալ և տարեցոյց յաւնիս 1ին երևնալու գիտաւորն ալ երկրիս վնաս մը տալու կարող չէ.

«Իրագիր մրն ալ, կըսէ Պ. Ֆիկիէ, հասարակաց վախերը 'ի գերև հանելու պաշտօնն ունեցած ատեն՝ աւելի ևս վախցընելու կը փութայ զանոնք, ըսելով թէ նոր երևնալու գիտաւորն ալ 1264ին երևցածն է, որ 1556ին նորէն երևնալով այնքան զարհուրեցուց կարոլոս—կուինտոսը. Բայց այս ատողը իր շրջանը 292 տարուան մէջ կատարելով 1848ին երևցած ըլլալու էր. Բայց համարելով թէ մոլորակաց շփոթութիւնները գ'անի աւշացուցած ըլլան կամ Հքիչ մը ժամանակ արագիլած ըլլան գ'անի իր ընթացքին մէջ, ընդունինք թէ կարոլոս—կուինտոսի ատենի՝ գիտաւորն ըլլայ երևնալու. Բայց և այնպէս բնաւ մէկ ատողագէտ մը չը կրնար համարձակիլ ըսելու թէ այս ատողը երկրի կամ անոր բնակչացը վնաս մը կրնայ հասցընել. վասն զի ասի խաւարման ծիրին վրայ 30° ծռած ըլլալով երկնից մէջ՝ երկրի ընթացքը բռնելէն շատ հեռու է. Ակէ զատ ամեն ատողագէտ տարբ օրագրութիւններն ըրին ու մէկն ալ ասանկ կասկած մը չունեցաւ».

Ա՛ս մէկդի՝ գիտաւորի մը երկրի պատահելը և անկէ մեզի վնաս մը գալը գրեթէ անհնար համարված է. Ուրախ վերջին ժամանակաց այն հռչակաւոր և մեծ ատողագէտը այս երկիւղներուն առաջքը առնելու համար «Ամերիկան Ինդիպենտիան» անուանով շինած ամենապարզ գիրքին մէջ ամեն ճիգը թափած է դիւրաւ հասկըցընելու ասի էն պարզմիտին ալ. Իրկար հաշիւներ ըրած ըլլալէն ետև կըսէ թէ, «գիտաւոր մը իր մարմնովը երկրի պատահելով զանի տապալելու համար 281 միլեոն անվնաս պատահարներուն մէջէն մինակ մէկ վտանգաւոր մը կրնայ ըլլալ. իր մառախուղովը երկրի զարնելն ալ 281 անգամին տասը կամ քսան անգամ տահի. Ընդունինք վայրկեան մը թէ իրենց

« Լոկրի բաշխիչները դիտաւորները մարդկային ազգը բնա-
« ջնջել ընելու կարող ըլլան. անտանելի ամեն մարդու հա-
« մար անծանօթ գիտաւորի մը երևումն առաջ եկած
« մահու վտանգը ջնջելու մէկ սափորի մը մէջ եղած 281
« գունատերուն մէջ մէկ հատ ճերմակ գունատ մը գտնը-
« վելուն, որոնց մէջէն առաջին անգամ քաշվելուն ճեր-
« մակ գունատին երևելէն յառաջ մահու դատա-
« պարտութիւնը։ Ամեն մարդ ալ որ քիչ մը իր խելքը
« գործածելու հաճի, որքան որ սիրէ իր կեանքը, ա-
« ռանց ակար վտանգի մը վրայ խնդալու է. Գիտաւորի
« մը երևցած՝ օրն երբեմն դեռ անոր ընթացքը որոշված
« չէ երկրագունտիս ամեն մէկ բնակչին համար սափորին
« մէջ գտնվված ճերմակ գունատն է »։

Մնացեալը հետևեալ թերով։

1851էն մինչև 1856ին վերջը Ամսատրալիայէն եղած ոսկին այսչափ եղած է, նոր Գալիլիայէն եղած է 6,738,151 Ինգլեզ լիրայի արժողութեամբ. և Վիքթորիայէն եղած է 34,745,000 լիրայի. Ասոնց երկուքը մէկէն կըլլայ 41,477,151 լիրայի արժողութեամբ ոսկի։ Ասոնց մէջէն 20,000 լիրայի ոսկի Ամերիկայի միացեալ նահանգները գացած է. 213,000 լիրայի ոսկի ալ այլ և այլ երկիրներ գացած են. մնացած 41,244,151 լիրայի արժողութեամբ ոսկին բրիտանական տէրութեան հողերը և անոր գաղթականութեան նահանգները մնացած է։

(Նոր)

— Այս օրերս Բէրայի հրդեհին երթալ հայ տունուորները լսելով թէ օգուտաւոր բարեգութ կայսեր շնորհած ողորմութենէն, ամեն մէկուն տասս հազար ղուրուշ բաժին ընկած ստակը կորսվեր է, դունէ դուռ պախաճիներ կը փնտռեն որ ան ստակը ուր պահված է, տալապին որ աչքը կամ որ սենեկին մէջը անտուկին խորը մոռցրված է հասկընան։ Նայինք ուրկէ պիտի գտնվի։

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
Ց. Գ. ՍԱՀԱՃԵԱՆ